ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՄԱԿՅՈՒԹՅՈՒՆ»
ԽՄԲԱԿՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Ս. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մկրտչյան.

Ի պատասխան Ձեր՝ 06.10.2017թ. հ.36/35 գրության, Ձեզ է ներկայացվում մայրաքաղաքի կանաչ տարածքների զարգացման վերաբերյալ 2018 թվականի ամփոփ տեղեկատվությունը:

Առդիր՝ «2» թերթ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանության ոլորտում քաղաքային իշխանությունների քաղաքականության հիմնական նպատակը բնապահպանական անվտանգության ապահովումն է, այդ թվում մայրաքաղաքի կայուն և համաչափ զարգացման նպատակով շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների հետ կապված վտանգների գնահատումը, կանխատեսումն ու կանխարգելումը, ինչպես նաև շրջակա միջավայրի կանաչապատումն ու պահպանությունը:

Ներկայումս Երևան քաղաքի կանաչ տնկարկները կազմում են 6762,5 հա, որից 862,5 հեկտարն է ընդհանուր օգտագործման, իսկ յուրաքանչյուր բնակչին բաժին ընկնող կանաչ տարածքը կազմում է ընդամենը 7,8 մ^2, որը դեռևս 2-2.3 անգամ զիջում է պահանջվող նորմերին:

Երևան քաղաքի անբարենպաստ կլիմայական և էկոլոգիական պայմաններում կանաչ տարածքներն ունեն սանիտարահիգիենիկ և միկրոկլիմայական պայմանները բարելավելու, գեղեցիկ լանդշաֆտա-դիզայներական տեսք հաղորդելու նշանակություն:

Հիմնախնդիրներ

1.Կանաչ տարածքների վերականգման աշխատանքների, նոր տարածքների կանաչապատման իրականացում՝ ըստ հստակ նախագծերի, համապատասխան ծրագրերի՝ ապահովվելով ոռոգումը և խնամքը

2. Անխափան ոռոգում երաշխավորող ոռոգման ցանցի ընդլայնում և կառուցում:

3. Ժամանակակից տեխնալոգիաների և նվաճումների ներդրում, տնկանյութի տեսականիի հիմնավորված ընտրություն- բուֆերային գոտիների ստեղծում

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Գարնանային և աշնանային ժամանակահատվածում կձևավորվի շուրջ 27.000 ծառ/ տարվա կտրվածքով կիրականացվի սանիտարական, ձևավորման, խորը և կանաչ էտի եղանակներ
- Մայրաքաղաքում կկրապատվի 75.000 ծառատեսակ, այս աշխատանքները կնպաստի միջատների զարգացման դեմ, ինչպես նաև գեղագիտական տեսք կհաղորդի ծառերին
- Կտնկվի շուրջ 46.000 հատ ծառ և թուփ/ տեսականին - սոսիներ, թխկիներ ակացիաներ, թույաներ և ծաղկող թփեր/
- Կտնկվի 2.730.000 ծաղկասածիլ, այդ թվում վարդակակաչ
- Բուժման կենթարկվի շուրջ 30.000 ծառեր
- Կտեղադրվի թվով 60 գեղարվեստական կոմպոզիցիաներ՝ թափվող ծաղիկներով, որոնք կտեղադրվեն մայրաքաղաքի գլխավոր փողոցներում, հրապարակներում, զբոսայգիներում և պուրակներում
- Կներկրվի 10526 խմ բուսահող, որը հնարավորություն կստեղծի բարելավել սիզամարգերի հողային ստրուկտուրան և հավասարաչափ կանաչ խոտածածկ
- Կստեղծվեն նոր ոռոգման ցանցեր
- Կբարելավվեն և կվերականգնվեն կանաչ տարածքներ և հանգստի գոտիներ